

“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1905

ԹԻՒ 6

ՀԵՏԱԽՈՅՁ ՇՈՒՆԸ

Անգղիական Պլատ Հաուընտ կոչուած շունը շան ամէնէն նշանաւոր տեսակներէն մէկն է: Զուտ Պլատ Հաուընտ մը 30—36 քաշ կու գայ և տիրասէր ու վստահելի է: Նշանաւոր աստիճան սուր հոտաւուծիւն ունի և միշտ քաջ է: Այս շուները շատ կը գործածուին Ամերիկա, ոճրագործներ գտնելու համար, և երբեք անյաջող չեն ելլեր երբ անոնց հետքին վրայ կը գտնուին, եթէ ոճրին գործուելէն ետքը շատ ժամանակ անցած չէ: Թէև հետքին վրայէն անցած ըլլան հազարաւոր ուրիշ մարդիկ, թէև անձրևած ըլլայ և թէև ժամեր անցած ըլլան, շուները տակաւին կարող են հետևել ոճրագործին:

Ահա քանի մը նշանաւոր պատմութիւններ անոնց նկատմամբ: Անգամ մը վաճառատուն մը կողոպտուեցաւ գիշեր ատեն, և ոտականութիւնը շունն ալով աւաղակները գտնելու ունէ միջոց մը, հեռագրով խնդրեց այս տեսակէն քանի մը շուն: Շուները երկաթուղիով լրկուեցան, և հասան ոճիրին գործուելէն 24 ժամ ետքը, և խակոյն գտան հետքը, աւաղակներուն ետևէն ինկան, անցան գետէ մը և զանոնք բռնեցին նախաճաշի վրայ: Անգամ մըն ալ ջորի մը գողցուեցաւ: Շուները հետևեցան ջորիին հետքին անոր կազմածը հոտուրտացնելէ ետքը, մինչև որ հասան տեղ մը ուր գողը ջորիին ոտքերը փաթթեր էր հոտը անհետացնելու համար: Բայց ասիկա ընելու համար կեցած ատենը իր հոտը թողած էր հոն, և շուները ասոր հետևեցան: Ուրիշ անգամ մը ձի մը և կառքը գողցուեցան: Շուներուն հոտուրտալ արուեցաւ ձիուն համար գործածուած սանտրը, և շուները շուտով գտան հետքը: Երկու քուկէս օր հետո, պնդելէ ետքը գողը բռնուեցաւ և



կառքը գտնուեցաւ 200 հազարամետր հեռու այն տեղէն ուր գողութիւնը գործուած էր: ————

ՈՒՐԻՇՆԵՐԸ ԵՐԶԱՆԻԿ ԸՆՏԸ  
 Երկու քուկէս օրիորդ մը կար որ շատ ապերջանիկ էր: Շքեղ տան մը մէջ կը բնակէր, ունէր շատ մը խաղալիկ-


ներ, մատաղածի (միտիլլի) մը և ժամացոյց մը, բայց շատ, շատ ապերջանիկ էր: Բան մը հաճոյք չէր տար իրեն: Մինչև անգամ օդը երբեք ճիշդ իր ուղածին պէս չէր: Անշուշտ անձրև կու գար երբ կ'ուզէր որ օդը պարզ ըլլար, կամ անշուշտ պարզ կ'ըլլար երբ վրան կ'առնէր իր գեղեցիկ նոր

հովանոցը : Առաւօտէ մինչև իրիկուն կը տրտնջէր, կը տրտնջէր, կը գանգատէր, կը գանգատէր և շատ ապերձանիկ էր : Օր մը դաշտին մէջ տեսաւ երկու աղքատ տղաք, որոնք ուրախութեամբ և աշխոյժով կը խաղային : Կրնայիք լսել անոնց խնդալու աղաղակները գրեթէ բոլոր գեղին մէջ : «Ս, յ տղաքը, ըսաւ օրիորդը ինքնիրեն, «չատ երջանիկ են, անոնց աչքերը պայծառ են, և կ'երևնայ թէ անոնք իրար շատ կը սիրեն : Կարծեմ հարցնելու եմ անոնց թէ ի՞նչ է իրենց երջանկութեան պատճառը :» Ուստի համարձակութիւն ընելով գնաց տղոց մէջ մեծին քով, որ իբր եօթը տարեկան էր, և ըսաւ անոր, «Գուք շատ երջանիկ էք, ի՞նչ է պատճառը :» Տղան առաջ քիչ մը անցաւ այս աղուոր օրիորդին առջև, որ չքեղ հանդերձներ հագած էր, և տղուն փոքր եղբայրը եկաւ և կէս մը պահու ըտեցաւ անոր ետևը :

«Չեր այսչափ երջանիկ ըլլալուն պատճառը ի՞նչ է,» հարցուց օրիորդը : «Չեմ գիտեր, օրիորդ, ի՞նչ ըսել կ'ուզէք : Ի՞նչ է երջանիկ,» «Չէ՞ք գիտեր, ըսել կ'ուզեմ,» պատասխանեց, «պայծառ, ուրախ և յուսալից :» «Ո՛հ,» ըսաւ տղան, «Յակոբիկ ու ես միշտ ուրախ ենք, անանկ չէ՞, Յակոբիկ :» Եւ փոքր եղբորը աչքերը կը խաղային, ինչպէս արևուն ճառագայթները շուրթին երեսի վէտ վէտովներուն (փոքրիկ ալիքներ) վրայ, երբ ըսաւ, «Ս, յ,» միշտ ուրախ : «Բայց ի՞նչ է ձեզ այսպէս ուրախ ընողը :» «Չեմ գիտեր, օրիորդ,» ըսաւ տղան, «միայն սա գիտեմ որ երբ Յակոբիկը ուրախացնելու աշխատիմ, այն ատեն ուրախ կ'ըլլամ :»

Եւ այս էր ամէնը զոր ան գիտէր խնդրին վրայ : Բայց երբ օրիորդը տուն գնաց, մտածեց անոր վրայ և ըսաւ ինքնիրեն, «Սա է ինչ որ այն պզտիկ տղան ըսել ուզեց, երջանիկ ըլլալու ճամբան ուրիշները երջանիկ ընելն է :» Ուստի խորհեցաւ փորձել և ամբողջ օրը, փոխանակ տրտնջելու, միմտալու և բանի չհասնելու, «Շնորհակալ եմ,» կ'ըսէր հաճելի ժպտով մը, և «Հոգ չէ, ես կ'ընեմ ատիկա,» կ'ըսէր անուշ չեչտով մը : «Ս, յ գործը քիչ մը դժուար է, բայց ես պիտի կատարեմ ևն :» Եւ տեսաւ թէ ամէն ոք հետզհետէ աւելի հաճելի կու գար իրեն, և փոխանակ միշտ զինք յանդիմանելու առաջուան պէս, կամ խոժոռ դէմք ցուցնելու իրեն, և կամ քէն

ընելու իրեն հետ, ամէն մարդ անուշ խօսք մը ունէր իրեն համար, և սովորաբար իրեն սէր չցուցնողները սկսան սիրել զինք : Ս, յ պէս հասկցաւ թէ երջանկութեան գաղտնիքը կը գտնուէր իր ներսիդին :




ՈՒՂՏԵՐՈՎ, ՔԱՇՈՒՈՂ, ՀՆՁԵԼՈՒ ՄԵՔԵՆՍԱՅ


Երկրագործական Ամերիկեան անհամար մեքենաներ յրկուսն են Ռուսիա : Երբ առաջին մեքենաները զբոսայտներէ կ'ուղարկուէին, զեղացիները անոնց հակառակ խօսեցան, դիւային հնարք կ'ընելով զանոնք : Բայց նախապաշարու մը կամաց կամաց անհետ եղաւ, և գեղացիները սկսան ծախու առնել հնձող մեքենաներ, չոքեչարժ կամնասայներ և ուրիշ մեքենաներ, այնպէս որ կրնան մրցիլ հարուստ հողատէրերէ :

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ  
Սիրելի փոքրիկ ընթերցողներս, ես ուսուցիչ մըն եմ և ձեռնէ շատերն ալ անչուտ դպրոցականներ են, և թերևս ինձի աշակերտողներ ալ կան ձեր մէջ : Փոքրիկ պատմութիւն մը պիտի ընեմ ձեզ նման դպրոցականի մը նկատմամբ, որ հիմա Յիսուսի գիրկին մէջ կը գտնուի, բայց իրեն երկու տող մէկ գրութիւնը քովս պահուած է տակաւին : Ահա՛ այդ գրութեան պարունակութիւնը : «Սիրելի ուսուցիչ, Ս, յ օր այնքան տկար եմ որ չկրցայ դպրոց գալ : Կ'աղաչեմ որ ներես ինձի և աղօթես որ երկար ատեն դասերէս բացակայ չմնամ :»

Իբր տասներեք տարի առաջ Բերրիի (Մ. Ազիզի կուսակալութիւն, Չարսանճագ) մէջ կը գտնուէր ուսուցչական պաշտօնով, այդ տղան, Սրբաքի, աշակերտներէս մէկն էր,



րու հետ, ցորենի վաճառանոցներուն մէջ, Ռուս գեղերու մէջ մասնաւոր դրութիւն մը կայ : Ոչ մէկ գեղացի ունի իր սեպհական հողը, այլ բոլոր հողը կը վերաբերի ամբողջ գեղին, և տարին անգամ մը գեղին զանազան ընտանիքներուն պետերը ժողով մը կ'ուսնեն և կ'որոշեն այդ տարուան մէջ ամէն մէկ ընտանիքի յանձնուելու արտը կամ արտերը : Հնձող սուղ մեքենաները գեղին համար կը զընուին, և զանոնք կը գործածեն զանազան ընտանիքները կարգաւ : Ամերիկայի մէջ ձին է միակ կենդանին որ կը գործածուի երկրագործութեան համար : Եզը ծանրաքայլ ըլլալով չգոհացներ Ամերիկացի երկրագործը : Բայց Ռուսիոյ մէջ հնձող մեքենաները երբեմն ուղտերը կը քաշեն ինչպէս կը տեսնուի այս պատկերին մէջ :



գրեթէ տասնեւչորս տարեկան : Հայրը մեռած էր, մայրն ալ շատ աղքատ չքաւորութեան դառն կնիքը այդ անբախտ տղուն ճակտին վրայ դրոյմած էր իր աղետալի հետքը : Բայց միայն այս չէր անոր դժբաղդութիւնը : Կէզորբը ենթարկուած էր ներքին մաշեցընող տկարութեան մը որ օր ըստ օրէ կ'աւելցնէր իր աւերները անոր դեղնած, վտիտ ու նիհար մարմինին վրայ : Կիսա իսկ, որ այս տղերը կը գրեմ, աչքիս առջևն է անոր տխուր կերպարանքը, անոր ողորմելի և հրեշտակային նայուածքը : Սակայն հիանալին այն էր որ այս տղան, հակառակ իր այդ ցաւատանջ վիճակին, օր մը չէր բացակայեր դպրոցէն, և օժտուած էր սքանչելի սրամտութեամբ մը հակառակ «Առողջ միտք առողջ մարմինի մէջ» ասացուածին : Աւելի քան տարի մը ապրեցաւ ան՝ իմ ուսուցչութեան օրով և երբէ՛ որ մը հարկ չեղաւ զինքը

յանդիմանել, որն իցէ թերութեան մը համար. միշտ պարտաճանաչ, միշտ խոհուն և միշտ գրազած կը տեսնէի զինքը գպրոցին մէջ: Անպատեհ ընթացք չտեսնուեցաւ անոր վրայ. անվայել բառ մը, խօսք մը բնաւ չստուեցաւ բերնէն: Շատ ալ ազոթասէր էր, թէ՛ առաւօտ և թէ՛ իրիկուն անպատճառ պիտի գտնուէր եկեղեցին: Արդաքի իր վերը յիշուած երկտողը գրած որն իսկ անկողին ինկաւ, և հետևեալ օրուան արեգակին ճառագայթները իր հողակոյտին վրայ ծագեցան. բայց ես վըստահ եմ որ աւելի կանուխ իր մաքուր հոգին ողողուած էր արդարութեան Արեգակին ճառագայթներով:

Բարեբոյ Մ. ՉԱՐԵԱՆՍԵԱՆ




ԱՌԱՏԱԶՆՈՒՆ ՆՈՒԷՐ ՄԸ

«Թանկագին նուէրներ ընելու համար շատ ստակի տէր ըլլալ հարկ չէ» ըսաւ անցեալ օր մէկը որ փողոցներուն մէջ կը պտըտի աչքերը լայն բացած: «Ես հետաքրքրուեցայ փողոցի փոքրիկ տղու մը, որ հիւանդանոց կ'երթար կուգար փողոցի կառքերը նստած: Անոր մէկ սրունքը վնասուած էր արկածով մը, և ձրի կը դարմանուէր հիւանդանոցին մէջ: Զեռքը վկայական մը ունէր այդ նպատակաւ, և երբեք չէր դադարեր իր բժիշկը օրհնելէ գովելէ:

«Օր մը զանիկա կառքին մէջ տեսայ շատ աղքատիկ երևոյթով մարդու մը հետ, որուն բազուկը կապով մը կախուած էր ուսէն: Աչք ըրաւ ինձի բաւական զուարթութեամբ, բայց խօսելէ զգուշացաւ: Երբ երկու ժամ ետքը զանիկա նորէն տեսայ կառք նստած, հարցուցի թէ ինչպէս է սրունքը: Շատ աղէկ յառաջ կ'երթայ: Տես ինձի հետ հոս կառքին վրայ գտնուած այդ մարդը: Բազուկը ստակալի կերպով վնասուած է. բայց գիտեմ թէ իմ տաքթորս զանիկա կրնայ աղէկցնել, և ես խնդրեցի անկէ որ ինձի ընելու դարմանին կէսը անոր ընէ: Բժիշկը առաջին անգամ դժկամակեցաւ, բայց յետոյ հաւանեցաւ, և ահա անոր կը տանիմ զինք: Զի՞ն կը հարցնէք. ո՞հ, ես առողջ ջանալու վրայ եմ: Բայց այդ մարդը

կին մը և երեք փոքրիկ աղջիկներ ունի խնամելու:»

«Ոչ, չեմ կարծեր թէ այդ տղուն ապաքինումէն բան մը պիտի պակսի, բայց ինք չգիտեր ատիկա: Եւ մտածեցէք այդ տղուն ըրած նուէրին վրայ»




ԼԱՓՈՆԻԱՅԻՔ

Նորվեկիոյ և Շուէտի հիւսիսային մասին քիչ մըն ալ Ռուսիոյ մէջ բնակիչներ կան, մանր ժողովուրդ մը, որոնք կը բնակին երկրագունդիս ամէնէն գէշ կլիմաներէն մէկուն մէջ: Մեծ կարողութիւն ունին նեղութիւններու դիմանալու, ուղղամիտ են և սուր իմացականութեան տէր: Անոնց գլխաւոր հարստութիւնն է եղջերուն, որ կը քաշէ անոնց բալիսիները, կու տայ կաթ, միս և հանդերձ: Լափոնիացիներէն ոմանք վաչկատուն են, այսինքն իրենց վրանները տեղէ տեղ կը փո-

թոյլ պիտի տայ իրեն գաւաթ մը գարեջուր խմել ամէն օր: Մարդը, թէև ինք խմող մըն էր, այս հարցումէն շարժուեցաւ քիչ մը: Մասածեց թէ, թէև ինք վայելելու է իր գարեջուրը, սակայն իր կինը պէտք չէ որ ոգելից ընպելի գործածէ: Բայց չկրցաւ դաշու ըսել իր կնոջ, ուստի հաւանութիւն տուաւ անոր առաջարկին: Անոնց ամուսնութենէն ի վեր տարի մը անցած էր, և իրենց պսակի տարեդարձին առաւօտը ճան իրական հրպարտութեամբ նայեցաւ իր կնոջ մաքուր և վայելուչ անձին վրայ, և իր նայուածքին և ձայնին մէջ տխուր շեշտով մը ըսաւ. «Մէրի, արձակուրդ մը ունեցած չե՞նք մեր ամուսնութեան օրէն ի վեր, բայց կը ցաւիմ որ քսակիս մէջ փէննի մը չունիմ որ գեղ երթամ մայրս տեսնելու:» «Երթալ կ'ուզե՞ս ճան», հարցուց կինը: Իր ժպտին մէջ արցունք մը կար, վասն զի իր սիրաւ շարժեցաւ երբ լսեց անոր խանդալատանքով խօսիլը առաջուան պէս: «Երթալ», ըսաւ այրը: «Հարկաւ կ'ուզեմ, աղջիկ: Բայց ինձի պէս աղքատ մարդ մը երկու փէննի չկրնար աւելցնել իր թոշակէն: Հարուստներուն տրուած է արձակուրդ և պտոյտ վաշելու: Բայց ես նորէն շատ կը փափաքիմ մայրս տեսնել:» Մէրի դարձեալ ժպտեցաւ, և այս անգամ անոր ժպտիտին մէջ ինչպէս համակրութեան նոյնպէս



խաղբեն, և իրենց եղջերուներու հօտերը իրենց հետ կը պտըտցնեն: Նորվեկիոյ և Շուէտի Լափոնիացիները ամէն ալ Բողոքական են, և գիտեն կարգալ գրել: Ռուսիայիները աւելի տգէտ են: Լափոնիացիք ձմեռը զարմանալի արագութեամբ կը ճամբորդեն ձիւնին վրայ չմուշկներով: Անոնցմէ մէկը անգամ մը 140 մղոն մէջ, հանգչելու և կերակուր ուտելու ժամանակն ալ մէջն ըլլալով, Այս պատկերը կը ցուցնէ Լափոնիացի աղջիկներու խումբ մը:



ՊԱՅՄԱՆԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Հետևեալը կը պատմուի տպածոյ (պասմա) շինող Մանչեսթըրցի մը վրայ: Անոր ամուսնութեան օրը իր նորապսակ կինը հարցուց թէ արդեօք

զաղտնիքի և հպարտութեան հով մը կար: Եետոյ ըսաւ կամացուկ մը, «Ճան, եթէ երթալ կ'ուզես, ես կրնամ բան մը ընել:» «Ի՞նչ բան, ստակ մնաց քովդ:» «Ոչ, բայց դարեջուրի գաւաթները ունիմ», ըսաւ կինը: Ճան կնոջը վրայ նայեցաւ ապշած: «Ի՞նչ ըսել կ'ուզես, աղջիկ», ըսաւ: «Մա ըսել կ'ուզեմ», ըսաւ կինը: Ետոյ վառարանին քով գնաց, և անոր քարերէն մէկուն ներքեւէն դուրս քաշեց գուլպայ մը, որուն մէջէն սեղանին վրայ պարպեց երեք հարիւր վաթսուներ հինգ երեք փէննիոց (հաւասար իբր հինգ Օսմանեան ոսկիի) և գոչեց. «Ահա ճան, կրնաս հիմա արձակուրդ մը վայելել:» «Ի՞նչ է ասիկա», հարցուց ճան ապշած: «Իմ օրական գարեջուրի բաժինս է, ճան:» Ճան այնքան յանդիմանուեցաւ իր խիղճէն, որքան ապշեցաւ և հիմա ունեցաւ: «Մէրի, դու չխմեցիր քու

բաժին դարձնուող: Ես ալ այլ ևս պիտի չխմեմ այս օրէն սկսելով:” Եւ ճան պահեց իր խօսքը: Անոնք իրենց արձակուրդը վայելեցին ծերունի մօր հետ. և Մէրիի փոքրիկ դրամագլուխը, որ խնայուած էր գարեջուրի գաւաթէն, եղաւ սերմը որմէ, տարիներուն թաւալումին հետ, աճեցաւ խանութ և տուն, նաև առողջութիւն և երջանկութիւն, խաղաղութիւն և պատիւ:



**ՁՈՒՐԸ ԻՆՁՈՒՒ ԶԻՐ ՎԱԶԻՐ**

«Ի՞նչ, շուր չկայ, Գեորգոս. պարապ խօսք», պոռայ Պրն. Գէորգ, երբ իւրեն ըսուեցաւ թէ շուրը չվազեր. և յետոյ գնաց ջրամբարը քննել: Բայց պարապ էր ջրամբարը: Ուստի մէկը դրկուեցաւ շուրին ընդունարանը, նա յերու համար թէ անոր մէջ շուր կ'ա՛ր, ընդունարանը ջրով լեցուն էր, և որովհետև հոն կարելի չեղաւ տեսնել շուրին դադարելուն պատճառ մը, հետևեցուեցաւ թէ պատճառը գեղին մէջէն անցնող խողովակին մէջ էր: Ուրեմն պէտք էր խողովակը քննել. և տան տիկինը կեցաւ դիտել երբ ծերունի թովմաս քննութիւնը կը կատարէր: «Անոր մէջ բան չկայ, թովմաս», ըսաւ տիկինը խնդալով երբ ծռելով նայեցաւ խողովակին, որուն բերանը թեւէ նուրբ ցանց մը կար, որպէս զի ներսը բան մը չմտնէր և չգոցէր շուրին անցքը: «Տիկին, շատ լաւ կ'երևնայ առտիկա, բայց եթէ ինձի հարցնէք, աղէկ կ'ըլլայ հանել այս ցանցը, և մէյմը նայիլ խողովակին ներսը»: «Բայց, թովմաս», աղաղակեց տիկինը, «հաւանական չէ որ բան մը մտնէ մէջը և գոցէ շուրին վազելու ճամբան»: «Բաներու երևոյթներու վստահիլ չըլլար, տիկին», ըսաւ ծերունի թովմաս երբ սկսաւ կամաց կամաց հանել ցանցը: «Կան բաներ որոնք շատ աղուոր կ'երևնան մինչև որ անոնց մօտը երթար, և կան բաներ, որոնք ներս կը սպրդին, մարդ չգիտեր թէ ի՞նչպէս, և» — թովմաս կանգ առաւ. և խողովակին նայեցաւ, և յետոյ խնդալէն ճաթեցաւ երբ դուրս ցաթկեց վիթխարի գորտ մը: Այո, գեղեցիկ, գիրուկ գորտ մը, որ կը թուէր թէ շատ ուրախ եղաւ դուրս հանուելուն համար: «Բայց այդ գորտը ի՞նչպէս մտած էր հոն:»

էր: Շատ մանր գորտի ձագ մը եղած ատենը թեւէ ցանցէն ներս մտաւ: Եւ եթէ երբեք դիտած էք գորտի ձագերը, պիտի յիշէք թէ ի՞նչպէս կարճ ժամանակի մէջ անոնց երկու փոքրիկ սրունքները կ'աճին, և յետոյ շուր մը կը թափի պոչը և կ'երևնան երկու սրունքներ ալ: Այնուհետև գորտի ձագը կ'աճի կը մեծնայ հետզհետէ, մինչև որ կ'ըլլայ շափահաս գորտ մը: Երբ անգամ մը ցանցէն ներս մտաւ և մեծցաւ, դիւրին չէր անկէ դուրս ելլել, և վերջապէս, ինչպէս ատենք, շուրին վազելը դադարեցաւ, և բոլոր պատճառը գորտն էր:

Պզտիկ բաներ երբեմն մեծ նեղութիւն կու տան, և պզտիկ մեղքերու հետևանքը մեծ վիշտեր կ'ըլլան: Եթէ մանր մեղքերէ ազատ մնանք, խոչորներէ չենք նեղուիր: Արթուն կեցէք և աղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չիյնաք:

**ՁԱՏԿԻ ՀԱՒԿԻԹ**

Կարմիր հաւկիթն Ձատիկ նշան՝  
 Ձատիկ ծաղիկն, Ձատիկ շուշան՝  
 Տէս, ինչ աղուոր ունի փթթիթ,  
 Տես, ինչ խորհուրդք կան յայդ հաւկիթն,  
 Կարմիր հաւկիթն Ձատիկ ընծան  
 Տուողն, Լ'առնողն մեկտեղ քընծան:

Այլ քան զամեն յոյժ գերազանց՝  
 Տեսնես նըշան այն վերամբարձ,  
 Գողգոթայի տեսա՛ր այն խողն,  
 Երբ բարեբացաւ Յեսուսն քալ՝  
 Կարմիր հաւկիթն Ձատիկ ընծան  
 Տուողն, Լ'առնողն մեկտեղ քընծան:

Ո՛հ, ինչ մեծ է այն սէրն, աւա՛ղ,  
 Որ Հայրն զՈրդին կ'ընէ մտատալ,  
 Որդին ալ, ո՛հ, եկաւ աշխարհ  
 Իր թանկ ընծան տարաւ առ Հայրն:

Սիրուն եղբայր, սիրեմ՝ հօգիդ,  
 Երբ ձեռքդ կ'առնուս կարմիր հաւկիթն,  
 Յիշէ՛ այն յորդ փրկորուն վրտակն  
 Որ կը քաճուէր խաչին յատակն:

Դու մտե՛ր ես յայն աւազան,  
 Ուր շատք մըտան՝ երկինք վազան,  
 Այն հեղուկօն ներկուէ՛ր ես,  
 Երկինք համար դուն կընթուէ՛ր ես:

Այլ դու, որ միշտ Ձատիկ հաւկիթն  
 Ներկես, խորհուրդք մ'ես ա՛ռ ի միտ,  
 Անեփ հաւկիթն ժամ չը մըտնար,  
 Անուրբ հօգին երկինք չէրթար:

Ձընի՛ մեղքով կոտրես հաւկիթդ,  
 Ձընի՛ ցաւքնես Աստուծայդ սիրուն,  
 Եւ խորհէ՛ զայն կոտորէ՛ք վերջ,  
 Խաչեալ Յեսուս ողջ է՛ քու մէջդ:  
 Վան ՄԻՍՈՒՅ ՅԵՎԿԱՆՑ

**«ՁՐՈՒՒՐՈՒ ԱՆՈՎ»**

«Անցեալ օր», կ'ըսէ Տր. Նորմէն Մքլէնտ, «պաշտօնակից քարոզիչ մը, որ հիւանդ էր, առաջարկեց այցելու-

թիւն մը տալ մահամերձ տղու մը: Ինձի զարմանալի բաներ պատմեց տասնըմէկ տարեկան այս տղուն վրայ, որ իր երեք տարուան հիւանդութեան միջոցին շատ համբերող հպատակութիւն ցուցուց Աստուծոյ կամքին, հոգիի հաղուագիւտ լուսաւորութեամբ:

Ես անոր այցելեցի: Տղան սաստիկ ցաւ ունէր: Տարիներէ ի վեր հանգիստ չէր գիտեր մէկ օր անգամ: Չարմանքով նայեցայ տղուն վրայ, Երբ անոր մօտ գացի և քանի մը կարեկցական խօսքեր ըրի, վրաս նայեցաւ իր կապոյտ աչքերով — չէր կրնար չարժիլ, իր մահուան նախորդ գիշերն էր — և ականջիս սա մէկ երկու բառերը չձնջեց, Ես զօրաւոր եմ Անով: Այս բառերը քիչ էին, և տկարութեամբ արտասանուեցան: Անոնք տկար տղու մը բառերն էին աղքատիկ տան մը մէջ, ուր միակ զարդն էր անիկա հեզ, հանդարտ և խանդակաթ մօր մը, բայց այս բառերը կը թուէին թէ կը վերցնէին բեռը նոյն իսկ սրտէն: Կը թուէր թէ անոնք աշխարհը առաջուրնէ աւելի գեղեցիկ կ'ընէին: Իմ սրտիս հաղորդեցին մեծ և օրհնեալ ճշմարտութիւն մը: Երանի՛ թէ ամէնս ալ լճուաւոր՝ ըլլայինք Անով:»



**ՏԵՄԱՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԱՍՏԻՃԱՆԸ**

Մարդուն մէկը չչիմանալով ակուսյին ցաւին, գնաց աստամբարով և քաշել տուաւ դային: Երբ տուն վերադարձաւ, կինը հարցոյց թէ ի՞նչ վճարած էր ակուսն քաշելու համար: «Երկու դահեկան», պատասխանեց մարդը մեղմ կերպով: Կինը դայրանալով, «Ի՞նչ, տունս կ'աւրես», պոռաց բարձրաձայն: «Անցեալները մեր դրացիին 32 ակուսները 3 դահեկանով քաշեցին, դուն ի՞նչպէս մէկ ակուսին 2 դահեկան կու տաս»: Մարդուկը առանց խօսելու անմիջապէս դնաց աստամբարով և քաշել տուաւ ամբողջ ակուսներն ալ և տուն դարձաւ ուրախութեամբ, մեծ շահ մ'ըրած կարծեւրով:

Բայու ԱԼԻՑ

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ՝ կանխիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտինհարց Ընկերութեան կողմէն

Արտօնատէր ձ. Ք. ԿՐԻՆ

Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՑ  
 Ի ՏԳԱՐԱՆՈՒ Ա. ՅԱՌՈՒ ՊՅՈՒՅՆԻՆ  
 Ֆինանսերը Եօդուշու, Ամերիկան Խան